

ներ։ Բերտյի հայ ընտելչութիւնը, ըստ բանախօս Ալպօյաճեանի, հիմնուած ժէ։ գարու սկզբում՝ դաղթելով Պալաթիայից 1805 թ. Գրիգոր ամերա դնել է 1500 մետր տարածութեամբ մի գետին, որի վերայ շինուած է եկեղեցին և ուրիշ շէնքեր։ Բայց 1810 թ. այրուում է փոքրաշէն եկեղեցին և ժամանակի Ստեփանոս Ազաւնի պատրիարքը շինուում է ներկայ հոյակապ տաճարը։ Յայտնի գրադէտ Հարանտ Առատուր Բերտյի վարժարանների պատմութիւնն է արել. առաջին վարժարանը հիմնել է Միսիթար Արաւոտացին, ուր և գտանիսունը է, գուցէ և Թագւոր վարժարապեաը։ Անբակո և Աշտարակեցին 1783 թ. եկել է Պօլիս և կատարելագործուել է այդ վարժարապետի մօտ։

Բերտյիների այսպիսի համայնակուն կեանքն ու հետաքըրքութիւնը իրենց թաղի եկեղեցական կեանքով օրինակելի կարող է լինել մեր ուսուահայոց համար։

Յունիսի 13-ին Ս. Պատրիարքի նախագահութեամբ մեծ հանդիսով աօնուել է Ազգային հիւանդանոցի 75-րդ տարեդարձը։

### Հայերը գաղթում են Տանկարանից

Մեր լրագրութեան վերջին գոյժը հայերի խմբովին գաղթն է, որ գնալով սասականում է։ Գաղթում են յատկապէս Մուշի և Բաղեցի (Իիթլիսի) դաւառներից (Իիթլիսի վիլայեթութիւն), Գաղթը երկու ուղղութեամբ է կատարուում, ոմանք գալիս են դէսլի Ռուսաստան, միւսոնք գէսլի Ամերիկայ։ Արտասահմանի լրագրութիւնը «Տիֆլու. Լիս.» ասելով՝ երկու բանակի է բաժանուած գաղթականութեան շարժառիթի նկատմամբ։ Ոմանք տեսնում են այս շարժման մէջ Ռուսաց «Ճաճուկէ գործակուների» մատը, այլք՝ Խլդեզ—Կիսոկի «Հայսաստանը առանց Հայերի» ոկզբունքը իրագործելը։ Թէ որքան անհիմն է առաջին ենթագրութիւնը և ճշմարտութեան մօտ երկրորդը՝ բաւական է յիշել մերձաւոր անցեալը, երբ Հայոց կոսովածներից յետոյ Ռուսահայաստանի գիւղերն ու քաղաքները ողողեցին հայ գաղթականները։ Հանգարտուելուց յետոյ, երբ փոքր վարձեց Ռուսաց կառավարութիւնը յետ գարձնել գաղթողներին, անդրգուելի արգելքի հանգիպեցաւ Տաճ. կառավարութեան կողմից։ Նոյն իսկ ժամանակ գարձողները բռնուեցան, կամ կրկին ստիպուեցան վախչել, կամ յաւիտեանս բանտերում նստել։

նոյն վիճակն ունեցան Մակեդոնիայից Բոլգարիա փախած գաղթականները, երբ Բոլգ. լշեանութիւնը ցանկացաւ նոյտ Մակեդոնիա ուղարկել:

Թէ որքան այս գիւային գործը հոգածութեան առարկայ է գարձած թիւքը կառավարութեան համար՝ երկում է այն «գաղթականական յանձնաժողովից» որ տարիներ առաջ կազմակերպել է Սուլթանը և առել իւր խնամակալութեան տակ: Իւր Պետական ծախքերին (զօրքին և ոստիկանութեան) փող չգտնող կառավարութիւնը առատ եկամտի աղբիւրներ է նշանակել յիշեալ յանձնաժողովի սնտուկի համար, և այդ եկամուաը միայն 1899 թուի իրատէի համաձայն՝ հասնում է 60,000 ոսկու, թողհետզեաէ շնորհուած աղբիւրները:

Այս բոլոր ոսկիները ծառայում են գաղթականութեան գործը թեթևացնելու: Դաղթել ցանկացող Հայու տունը, կալուածքը գնել, ուրեմն միջոց տալ գաղթելու, իսկ կայքը յանձնել եկաւոր թուրքի կամ լեզկու, որոց հստանքը միշտ կայ և գնալով ոստիկանում է: Եթէ այս բանի վերայ աւելացնենք և այն հանգամանքը, որ Խուսաստանի ժողովրդի համար հողի պակասութիւն է զգացուում, և շատ մօտ ապագայում Մեծ Խուսաստանը ինքը գաղթավայրերի պիտի մանգայ, և Մանճուրական կորստաբեր պատերազմի նորատակներից մինն էլ մօտիկ ապագայի գաղթավայրն էր Եղել, այն ժամանակ պարզ կլինի այն անհիմն «Խուս գործակալների մատը» տեսնել Հայոց գաղթականութեան մէջ և կարելի է ասել, միակ և միակ գաղթելու պատճառը թիւքը կառավարութեան գժոխային քաղաքականութիւնն է:

#### Ա. Յարութիւնեան.

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐԾՆ. ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵԱՆՔ ԵԼՆԵԼԻՔ ԱՄՈՒՄՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
ՀՐԱՀԱՆՔ

1. Ար և է ամուսնական խնդիր, որ ամուսիններու իրարութայ գանգատաներէն ծագում կառնէ, պէտք է նախապէս Մայրաքաղաքիս մէջ Դատաստանական Խորհրդոյ կողմէ, և գաւառաց մէջ վիճակային Դատաստանական Խորհրդոյ և Կրօնական ժողովոյ կողմէ գատասնական ոճով քննութեան ենթարկուած, և գանգատանաց նիւթ եղող կըողութիւնը հաստատուած ըլլայ: